NEWS RELEASE

UNITED NATIONS HUMAN RIGHTS SPECIAL PROCEDURES
SPECIAL RAPPORTEURS, INDEPENDENT EXPERTS & WORKING GROUPS

Հայերեն տարբերակը ստորև.

Հայաստան

Վարձկանների օգտագործման վերաբերյալ ՄԱԿ-ի կոնվենցիայի փորձագետները դրական են գնահատում ազգային օրենսդրությունը և հորդորում ավելի խիստ վերահսկողություն

ԵՐԵՎԱՆ/ԺՆԵՎ (27 փետրվարի 2023թ.). ՄԱԿ-ի փորձագետները գնահատում են Հայաստանի հանձնառությունը պայքարելու վարձկանների և մասնավոր պահնորդային ընկերությունների օգտագործմամբ մարդու իրավունքների խախտման դեմ՝ խրախուսելով առավել ընդարձակ վերահսկողություն և մարդու իրավունքների ավելի խորը ինտեգրում ազգային քաղաքականություններում:

Հայաստան կատարած ութնօրյա այցելության ընթացքում, վարձկանների, մասնավոր ռազմական և պահնորդային ընկերությունների օգտագործման ՄԱԿ-ի աշխատանքային խումբը տեղեկություններ է հավաքագրել այն օրենքների ու ենթաօրենսդրության վերաբերյալ, որոնք քրեականացնում են վարձկանների գործողությունները: Խումբը նաև հաշվի է առել մասնավոր պահնորդային ընկերությունների գործունեությունը և դրա ազդեցությունը մարդու իրավունքների վրա:

Այցելության ավարտին հրապարակված հայտարարությամբ՝ փորձագետները նշել են, որ «Հայաստանը առանձնանում է իր ջանքերով՝ ուղղված արտացոլելու Վարձկանների մասին ՄԱԿ-ի 1989թ-ի կոնվենցիայի դրույթները ազգային օրենսդրությամբ, մասնավորապես՝ ՀՀ քրեական օրենսգրքի 147-րդ հոդվածում, որով, միջազգային իրավունքին համապատասխան, սահմանվում է վարձկանությունը:

Փորձագետները տեղեկություններ են ստացել, որ Կապանում տեղի ունեցած դատական լսումների ընթացքում, մարզի առաջին ատյանի դատարանը կիրառել է վարձկանությունը քրեականացնող օրենսդրական դրույթները և պատերազմական գործողությունների ընթացքում տեղի ունեցած դաժանություններին մասնակցելու համար մեղադրանք ներկայացրել սիրիացի երկու վարձկանների: Երկուսն էլ դատապարտվել են ցմահ ազատազրկման, սակայն մի դատավարության ընթացքում, որ տևել է մեկ օր՝ 2021թ-ի մայիս ամսվա ընթացքում:

Փորձագետները նաև ընդգծել են, որ տվյալ օրենսդրական կարգավորումների կիրարկումը դեռ զարգացման վաղ փուլում է և հորդորել Հայաստանի դատական իշխանությանը ապագայում հաշվի առնել առավել զոհակենտրոն մոտեցումներ:

Փորձագետները նաև տեղեկություններ են ստացել երկրում մասնավոր պահնորդային ընկերությունների օգտագործման վերաբերյալ:

Աշխատանքային խումբը նշել է. «Մենք ողջունում ենք Մասնավոր պահնորդային ընկերությունների մասին օրենքում փոփոխությունների կատարումը, որոնցով ստեղծվել է հստակ օրենսդրական դաշտ մասնավոր պահնորդային ծառայություններ տրամադրող ընկերությունների լիցենզավորման և ցույցերի ու հավաքների ընթացքում մշտադիտարկման իրականացման համար»:

Փորձագետները նաև հաշվի են առել, որ Հայաստանը նախաձեռնել է բարեփոխումներ կիբերանվտանգության ոլորտում և նշել. «Հորդորում ենք կառավարությանը ապահովել կիբերանվտանգության ոլորտում մասնավոր պահնորդային ընկերությունների գործողությունների համապատասխանությունը մարդու իրավունքների պաշտպանության սկզբունքներին»:

Հաշվի առնելով տնտեսության արդյունահանող ճյուղերում մասնավոր պահնորդային ընկերությունների ծառայություններից օգտվելու դեպքերի ավելացումը՝ ՄԱԿ-ի փորձագետները մտահոգություն են հայտնել այն ենթադրությունների վերաբերյալ, որ վերաբերում են մասնավոր պահնորդային կապալառուների աշխատակիցների շփմանը ազդակիր համայնքների հետ՝ վերջիններիս կողմից կենսակերպի և մարդու իրավունքների նկատմամբ առաջացած ազդեցության վերաբերյալ ներկայացված բողոքների լույսի ներքո:

Փորձագետները հայտնել են հետևյալը. «Խորհուրդ ենք տալիս ստեղծել մասնավոր պահնորդային ծառայությունների անկախ վերահսկողության մեխանիզմ: Մասնավոր պահնորդների պարբերական ուսուցումը, մարդու իրավունքների պաշտպանության սկզբունքների և գենդերային զգայունության վերաբերյալ անհրաժեշտ է»:

Փորձագետների պատվիրակությունը հանդիպումներ է ունեցել Երևանում, կառավարության, հասարակական կազմակերպությունների և իրավագետների հետ, ինչպես նաև այցելել ազդակիր համայնքներ՝ Գորիսում և Կապանում:

2023թ-ի սեպտեմբերին, աշխատանքային խումբը, արված բացահայտումների և առաջարկությունների վերաբերյալ ամբողջական հաշվետվություն կներկայացնի Մարդու իրավունքների խորհրդին:

ՎԵՐՋ

Մարդու իրավունքների խախտման և ժողովուրդների ինքնորոշման իրավունքի իրացմանը խոչընդոտելու նպատակով վարձկաններին որպես միջոց օգտագործելու աշխատանքային խումբը ստեղծվել է 2005թ-ի հուլիսին՝ Մարդու իրավունքների հանձնաժողովի 2005/2 որոշման համաձայն: Աշխատանքային խումբը շարունակել է վարձկանների

օգտագործման վերաբերյալ հատուկ զեկուցողի մանդատը, որը ձևավորվել էր դեռ 1987թ-ին: Աշխատանքային խումբը բաղկացած է հինգ անկախ փորձագետներից՝ համապատասխան աշխարհագրական բաշխվածությամբ:

*Հատուկ զեկուցողները, անկախ փորձագետներն ու աշխատանքային խմբերը Մարդու իրավունքների խորհրդի **հատուկ ընթացակարգերի** միջոցներ են: Հատուկ ընթացակարգեր կոչվող կառույցը ՄԱԿ-ի մարդու իրավունքների համակարգում փորձագետների ամենախոշոր ցանցն է, որը հայտնի է որպես Խորհրդի անկախ փաստահավաք և մշտադիտարկման առաքելությունների մեխանիզմ, որը կիրառվում է առանձին երկրներում առաջացած իրավիճակներում կամ ոլորտային խնդիրների առաջացման դեպքում՝ ամբողջ աշխարհում: Հատուկ ընթացակարգերի փորձագետները գործում են կամավորականության սկզբունքով, չեն հանդիսանում ՄԱԿ-ի աշխատողներ և չեն վարձատրվում արված աշխատանքի դիմաց: Նրանք անկախ են որևէ պետությունից կամ կազմակերպությունից և գործում են սեփական միջոցներով:*

Լրացուցիչ տեղեկությունների համար կարող եք դիմել Տկն. Ալիա Էլ Խատիբին, OHCHR (alia.elkhatib@un.org) կամ Տկն. Լաուրա Ռամիռեսին, OHCHR (laura.ramirezbarrios@un.org)

ՄԱԿ-ի այլ անկախ փորձագետների վերաբերյալ հարցումները խնդրում ենք ուղղել Տկն. Մայա Դեռուազին, ՄԱԿ մարդու իրավունքներ, Հանրության հետ կապերի բաժին (maya.derouaz@un.org) կամ Դհարիշա Ինդրագուպտային (dharisha.indraguptha@un.org):

ՄԱԿ-ի անկախ փորձագետների գործունեությանը կարող եք հետևել հետևյալ աղբյուրից. Twitter@UN_SPExperts

Ստահոգվա՞ծ եք այսօրվա աշխարհով:
ՊԱՇՏՊԱՆԵՔ մարդու իրավունքները
#Standup4humanrights
կամ այցելեք՝ http://www.standup4humanrights.org